NASDAQ OMX

# ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

**5 փետրվարի 2016 թվականի N Բ-001-02/16**

**ք. Երևան**

## «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍՈՎՈՐԱԿԱՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ԲԱԺՆԵՏՈՄՍԵՐԻ ԵՐԿՐՈՐԴԱՅԻՆ (Բ) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2015 թվականի դեկտեմբերի 29-ի հայտը 100 (հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 109,669,471 (մեկ հարյուր ինը միլիոն վեց հարյուր վաթսունինը հազար չորս հարյուր յոթանասունմեկ) հատ սովորական անվանական բաժնետոմսերը ցուցակելու և բաժնետոմսերի երկրորդային (Բ) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Օպերատոր) դիտորդ խորհրդի հավանությունը և Ցուցակման հանձնաժողովի կողմից 2016 թվականի հունվարի 29-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 10-րդ գլխի 52 կետով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

***ՈՐՈՇՈՒՄ Է՝***

1. «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ-ի 100 (հարյուր) ՀՀ դրամ անվանական արժեքով, 109,669,471 (մեկ հարյուր ինը միլիոն վեց հարյուր վաթսունինը հազար չորս հարյուր յոթանասունմեկ) հատ սովորական անվանական բաժնետոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMUNIBS10ER5 ծածկագիրը, Իսկ Օպերատորի կողմից շնորհվել է UNIB հապավումը, ցուցակել և ընդգրկել բաժնետոմսերի երկրորդային (Բ) ցուցակում, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական և ռեպո գործարքների կնքումը:
2. Սահմանել, որ Ընկերության բաժնետոմսերը ցուցակվում եմ բաժնետոմսերի երկրորդային (Բ) ցուցակում այն պայմանով, որ Ընկերությունը ամենաուշը մինչև 30.12.2016թ. և դրանից հետո կապահովի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոններ»-ի 52-րդ կետի 3)-րդ ենթակետով սահմանված պահանջը, հակառակ դեպքում Ընկերության բաժնետոմսերը կապացուցակվեն՝ դրանք տեղափոխելով Ազատ շուկա կամ առանց դրա:
3. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի փետրվարի 10-ին:

**ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ** **ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՍԱՐՈՅԱՆ**

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ • ՀՀ, Երևան 0010, Միհեր Մկրտչյան 5բ • www.nasdaqomx.am
հեռ.՝ +374 10 543 321 • ֆաքս՝ +374 10 543 321 լր 135 • էլ. փոստ՝ info@nasdaqomx.am